



Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց

4 փետրվարի 2016 թվականի N 4

3. ԱՌԱՎԵԼ ՏԱՐԱԾՎԱԾ ՈՉ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ 2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հավանություն տալ Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների դեմ
պայքարի 2016-2020 թվականների ծրագրին՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. փետրվարի 5
Երևան

Հավելված
 ՀՀ կառավարության 2016 թ.
 փետրվարի 4-ի նիստի N 4
 արձանագրային որոշման

ԾՐԱԳԻՐ

ԱՌԱՎԵԼ ՏԱՐԱԾՎԱԾ ՈՁ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ 2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Համակատարող	Կատարման ժամկետը	Ակնկալվող արդյունք	Ակնկալվող ֆինանսական միջոցները	Վերստուգելի չափանիշ
Նպատակը՝ Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված կառավարման համակարգի ձևավորում, զարգացում						
1. Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման հարցերով համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի ձևավորում համապատասխան իրավական ակտով	ՀՀ առողջապահության նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն	2016 թվական	Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված միջոցառումների կազմակերպման համակարգում	Ֆինանսավորում չի պահանջում	Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման հարցերով ձևավորված համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի առկայություն

		<p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p> <p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p> <p>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p>				
<p>2. Տարածքային կառավարման մարմիններում եռամսյակը մեկ անգամ կազմակերպել ոչ վարակիչ հիվանդությունների զարգացման ռիսկի գործոնների տարածվածության, ոչ վարակիչ հիվանդություններից հիվանդացության և մահացության ցուցանիշների վերաբերյալ քննարկումներ և արդյունքների վերաբերյալ եռամսյակային ամփոփ հաշվետվություն ներկայացնել ՀՀ առողջապահության</p>	<p>ՀՀ մարզպետարաններ</p>	<p>Երևանի քաղաքապետարան, այլ համայնքներ (համաձայնությամբ)</p>	<p>2016-2020 թվականներ</p>	<p>Տարածքային կառավարման մարմիններում ոչ վարակիչ հիվանդությունների զարգացման ռիսկի գործոնների տարածվածության, ոչ վարակիչ հիվանդություններից հիվանդացության և մահացության ցուցանիշների</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջում</p>	<p>Յուրաքանչյուր տարածքային կառավարման մարմնում տարեկան 4 քննարկման կազմակերպում, քննարկումների արդյունքների վերաբերյալ տարեկան 4 հաշվետվության ներկայացում ՀՀ առողջապահության</p>

նախարարություն				վերլուծություն, անհրաժեշտության դեպքում համապատասխան միջոցառումների ապահովում		նախարարություն
Նպատակը՝ Խթանել միջոցառումների իրականացումը՝ ուղղված ոչ վարակիչ հիվանդությունների կառավարելի դիսկի գործոններին						
3. Առողջ ապրելակերպի, մասնավորապես՝ ֆիզիկական ակտիվության խթանմանն ուղղված միջոցառումների կազմակերպման ուղղությամբ տարածքային կառավարման մարմինների համապատասխան ստորաբաժանումների հետ համագործակցություն, ինչպես նաև նրանց համար առողջ ապրելակերպին ուղղված ուղեցույցների մշակում	ՀՀ առողջապահության նախարարություն	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	2016-2020 թվականներ	Առողջ ապրելակերպի, մասնավորապես՝ ֆիզիկական ակտիվության խթանման նպատակով բարենպաստ պայմանների ապահովում	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Առողջ ապրելակերպի, մասնավորապես՝ ֆիզիկական ակտիվության խթանման նպատակով բարենպաստ պայմանների առկայություն, նշված ժամկետում մշակված ուղեցույցների ներդրում
Նպատակը՝ Բնակչության շրջանում ոչ վարակիչ հիվանդությունների զարգացման դիսկի գործոնների կանխարգելման վերաբերյալ իրազեկվածության բարձրացում						
4. Բնակչության շրջանում ոչ	ՀՀ առողջապահության	ՀՀ կրթության և	2016-2020	Բնակչության շրջանում ոչ վարակիչ	ՀՀ օրենքով չարգելված այլ	Նշված ժամկետում ոչ վարակիչ

<p>վարակիչ հիվանդությունների զարգացման ռիսկի գործոնների կանխարգելմանն ուղղված իրազեկման միջոցառումների իրականացում, այդ թվում ոչ վարակիչ հիվանդությունների միջազգային օրերի կապակցությամբ միջոցառումների կազմակերպում (կլոր սեղաններ, հեռուստահաղորդումներ, հոդվածներ, քննարկումներ և այլն)</p>	<p>Նախարարություն</p>	<p>գիտության նախարարություն, տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություն/ներ (համաձայնությամբ) Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)</p>	<p>թվականներ</p>	<p>հիվանդությունների զարգացման ռիսկի գործոնների կանխարգելման վերաբերյալ իրազեկվածության բարձրացում</p>	<p>աղբյուրներ</p>	<p>հիվանդությունների զարգացման ռիսկի գործոնների կանխարգելմանն ուղղված իրազեկման միջոցառումների, այդ թվում ոչ վարակիչ հիվանդությունների միջազգային օրերի կապակցությամբ միջոցառումների (կլոր սեղաններ, հեռուստահաղորդումներ, հոդվածներ, քննարկումներ) առկայություն</p>
-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-----------------------	---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	------------------	--------------------------------------------------------------------------------------------------------	-------------------	----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

Նպատակը՝ Ավելցուկային քաշի և ճարպակալման կանխարգելում

<p>5. Ավելցուկային քաշի և ճարպակալման կանխարգելման և դրա դեմ պայքարի միջոցառումների մշակում և հաստատում ՀՀ առողջապահության նախարարի հրամանով</p>	<p>ՀՀ առողջապահության նախարարություն</p>		<p>2019 թվական</p>	<p>Ավելցուկային քաշի ու ճարպակալման տարածվածության նվազեցում</p>	<p>ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>	<p>Ավելցուկային քաշի և ճարպակալման կանխարգելման և դրա դեմ պայքարի միջոցառումների իրականացում</p>
--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	------------------------------------------	--	--------------------	------------------------------------------------------------------	--------------------------------------------	--------------------------------------------------------------------------------------------------

Նպատակը՝ Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդություններից և բրոնխիալ ասթմայից հիվանդացության նվազեցում						
6. Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդությունների կանխարգելման և դրա դեմ պայքարի միջոցառումների մշակում և հաստատում ՀՀ առողջապահության նախարարի հրամանով	ՀՀ առողջապահության նախարարություն		2017 թվական	Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդացության նվազեցում	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդությունների կանխարգելման և դրա դեմ պայքարի միջոցառումների իրականացում
7. Բրոնխիալ ասթմայի կանխարգելման և դրա դեմ պայքարի միջոցառումների մշակում և հաստատում ՀՀ առողջապահության նախարարի հրամանով	ՀՀ առողջապահության նախարարություն		2018 թվական	Բրոնխիալ ասթմայից հիվանդացության նվազեցում	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Բրոնխիալ ասթմայի կանխարգելման և դրա դեմ պայքարի միջոցառումների իրականացում
Նպատակը՝ Ոչ վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական հսկողության և դրանց ռիսկի գործոնների մշտադիտարկման համակարգի հզորացում՝ ըստ սոցիալ-տնտեսական գործոնների						
8. Ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների ազգային մշտադիտարկման համակարգի լրամշակում	ՀՀ առողջապահության նախարարություն		2017-2020 թվականներ	Ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների ազգային մշտադիտարկման համակարգի հզորացում	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների լրամշակված ազգային մշտադիտարկման համակարգի առկայություն և ներդրում
9. Համաճարակաբանական հետազոտությունների մշակում և իրականացում	ՀՀ առողջապահության նախարարություն	Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	2016-2020 թվականներ	Ոչ վարակիչ հիվանդությունների զարգացման ռիսկի գործոնների տարածվածության ուսումնասիրություն և համաճարակաբանական	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Նշված ժամկետում մշակված և իրականացված համաճարակաբանական հետազոտությունների առկայություն

		Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)		օրինաչափությունների բացահայտում		
Նպատակը՝ Շրջակա միջավայրի գործոնների և ռիսկերի ուսումնասիրություն և մարդու առողջության վրա դրանց ազդեցության կանխարգելում						
10. Մշակել պիլոտային ծրագրեր շրջակա միջավայրի բարձր աղտոտվածությամբ համայնքներում՝ բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի ռիսկի գործոնների ազդեցության վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու, գործոններից խուսափելու, ռիսկի գործոնները նվազեցնելու նպատակով, ինչպես նաև բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի ազդեցության ռիսկի համաճարակաբանական գնահատման մեթոդաբանության մշակում և ներդրում	ՀՀ առողջապահության նախարարություն	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն	2018-2020 թվականներ	Շրջակա միջավայրի բարձր աղտոտվածությամբ համայնքներում՝ բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի ռիսկի գործոնների ազդեցության վերաբերյալ իրազեկվածության բարձրացում և ռիսկի գործոնների ազդեցության կանխարգելում	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Շրջակա միջավայրի բարձր աղտոտվածությամբ համայնքների համար պիլոտային ծրագրերի ներդրում և արդյունքների վերլուծություն
Նպատակը՝ Առողջապահական համակարգի, ինչպես նաև այլ նախարարությունների ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման գործընթացում ընդգրկված մասնագետների ուսուցման ապահովում						
11. Առողջապահական համակարգի մասնագետների, ինչպես նաև այլ նախարարությունների ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման գործընթացում ներգրավված մասնագետների ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների վերաբերյալ գիտելիքների գնահատում, ոչ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ՀՀ առողջապահության նախարարություն Հասարակական կազմակերպություններ (համաձայն	2016-2020 թվականներ	Ոչ վարակիչ հիվանդությունների զարգացման ռիսկի գործոնների վերաբերյալ ուսուցման գործընթացի ապահովում	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Նշված ժամկետում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման գործընթացում ներգրավված մասնագետների համար մշակված ուսումնական ծրագրերի ներդրում

վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների վերաբերյալ ուսումնական ծրագրերի մշակում և ուսուցում		նությամբ) Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)				
Նպատակը՝ Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ու դրանց դեմ պայքարին ուղղված ինտեգրված առողջապահական ծառայությունների, այդ թվում առաջնային կանխարգելման, վաղ հայտնաբերման, բուժման, վերականգնողական և պալիատիվ խնամքի բարելավում						
12. ՀՀ բնակչության ռիսկի խմբերում ոչ վարակիչ հիվանդությունների (զարկերակային գերճնշում, շաքարային դիաբետ, արգանդի պարանոցի քաղցկեղ) զանգվածային սքրինինգների իրականացում	ՀՀ առողջապահության նախարարություն		2016-2018 թվականներ	Ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերում	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՀՀ բնակչության ռիսկային խմբերի ընդգրկվածություն զանգվածային սքրինինգներում
13. Ոչ վարակիչ հիվանդությունների բուժման, այդ թվում վերականգնողական բուժման, պալիատիվ խնամքի վարման ընթացակարգերի հաստատում ՀՀ առողջապահության նախարարի հրամանով	ՀՀ առողջապահության նախարարություն		2017-2020 թվականներ	Ոչ վարակիչ հիվանդությունների բուժման ստանդարտ մոտեցումների ապահովում	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	Նշված ժամկետում ընթացակարգերի ընդունում և ներդրում